ԱՐԹՈՒՐ ՖԵԼԻՔՍԻ ԽԱՉԻԿՅԱՆ
1977 – 2021

Սույն թվականի նոյեմբերի 21-ին կյանքից անժամանակ հեռացավ ՀՀ ԱՆ ակադ. Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի (ԱԱԻ) նյարդաբանության և նեյրովիրաբուժության ամբիոնի դասախոս և նեյրովիրաբուժության կլինիկական օրդինատուրայի ծրագրի ղեկավար, «Էրեբունի» բժշկական կենտրոնի (ԲԿ) նյարդավիրաբուժության բաժանմունքի վարիչ, Արթուր Ֆելիքսի Խաչիկյանը:

Արթուր Խաչիկյանը ծնվել է 1977թ. հոկտեմբերի 27-ին: Անցել է նեյրովիրաբույժի մասնագիտության ձեռք բերման երկարատև և բարդ ուղի: Մասնակցել է մասնագիտական տարաբնույթ դասընթացների և վերապատրաստումների հայաստանյան ու արտասահմանյան առաջատար կրթական և բժշկական կառույցներում (ԱՄՆ, Ավստրիա, Ռուսաստան և այլն):

2013թ. պաշտպանել է գիտական թեզ՝ «Ողնաշարային խողովակի պարանոցային և գոտկային հատվածների կենտրոնական ստենոզի վիրահատական բուժում» թեմայով և արժանացել բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

2018թ.-ից ստանձնել է «Էրեբունի» ԲԿ նյարդավիրաբուժության բաժանմունքի վարչի պաշտոնը:

2020թ. հանձն է առել կրթական առաքելություն՝ դառնալով ԱԱԻ նյարդաբանության և նեյրովիրաբուժության ամբիոնի դասախոս ու նեյրովիրաբուժության կլինիկական օրդինատուրայի ծրագրի ղեկավար:

Անդամակցել է տեղական, ամերիկյան և եվրոպական նեյրովիրաբուժական ասոցիացիաների: Նեյրովիրաբուժության ոլորտում բազմաթիվ հոդվածների հեղինակ և համահեղինակ էր:

ԱԱԻ նյարդաբանության և նեյրովիրաբուժության ամբիոնում աշխատելու անգամ այդքան կարճ ժամանակահատվածում իր անփոխարինելի ներդրումն է ունեցել նեյրովիրաբուժության մասնագիտությամբ կլինիկական օրդինատուրայի ծրագրի կայացման և տարաբնույթ գիտակրթական ակտիվությունների իրականացման գործում՝ դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, պրակտիկ պարապմունքներ և այլն: Համագործակցել է արտասահմանյան հայ և այլազգի նյարդավիրաբույժ և հարակից մասնագիտությամբ գործընկերների հետ, ինչի արդյունքում կառուցվել են նոր հարաբերություններ՝ նպաստելով փորձի փոխանակման, հարստացման և ամբիոնում ուսումնամասնագիտական գործունեության առավել արդյունավետ իրականացմանը: Իր մասնագիտական գործունեության ընթացքում աշխատանքային և անձնային ուրույն ձեռագիրն է փոխանցել գործընկերներին և կլինիկական օրդինատորներին՝ բորբոքելով նրանց մեջ մասնագիտական բարձր բարոյական արժեքների կարևորության զգացումը:

Մասնագիտական գործունեության ընթացքում վայելել է սեր ու հարգանք իր գործընկերների և պացիենտների կողմից: Կորստի վիշտը անջնջելի է, և մեր սիրելի գործընկերն ընդմիշտ կմնա մեր սրտերում որպես վառ, իր ընտանիքին ու մասնագիտությանը նվիրված, բարձր մարդկային արժեքներով օժտված, հրաշալի անձնավորություն:

DOI:10.54235/27382737-2021.v1.2-69. Published online: 30 December 2021